

Հեղինակը վերլուծութեան կ'ենթարկէ պատերազմի ժամանակ Ուզուն Քէօբըիւլի մէջ ծաղած բժառանգի համաճարակը և հանդէս կը բերէ յատկապէս այն ընթրոշ և արտասովոր ակտանշաններն ու երևոյթները, որոնք յայտնաբերուած են բժատեանդով վարակուած երեխաներու մօտ: Երկրորդ զբօնակով Հեղինակը կը քննէ բժատեանդի և կրկնատեանդի միասնական դոյութեան զանազան ձևերն ու փոուերը:

Այս զբօնակներով Տօքթ. Մեղպուրեանը կը ներկայանայ Ֆրանսական դիտական հանրութեան իրբև դիտելու և զննելու ձիբքով սօտուած բժիշկ մը, որ իր Հիւանդները կը վերլուծէ դիտական մեթոդով: ԲԺ. Ե. Ս.

ԲԺ. Պետրոս Աւրանեամ. — Գրեց Հայկ Անէմեան Թաւրիզ. 1925.

Հրատ. Ատրպատականի Հայոց Ազգաախօսամ Ընկերութեամ

ԲԺ. Պետրոս Աւրանեանը մի արարախօս հայ է եղեր, որ բախտի փայտով ինկեր է Լոնտոն, ուրկէ բժիշկ վկայուեր է 1882 թուին, 29 տարեկան հասակին: Նախ հաստատուեր է Կարին, ու յետագային Թաւրիզ և ուր մեուեր է 1919-ին:

Այս զբօնակէն կը տեղեկանանք, որ հանդուցեալը շատ կարող բժիշկ է եղեր, և սակայն ինքիբնն նուկրեր է հանրային աշխատանքի, հայ Ժողովուրդի յեղափոխական կեանքին, յատկապէս իր դործունէութեան սկզբնական շրջանին: Ի միջի ալլոց, հիմնադրին է հանդիսացեր Թաւրիզի Ազգատախնամ ընկերութեան, որն այնքան բարեբար դործ է կատարած և կը շարունակէ ցարդ իր դործը անխափան:

Իր հարստութեան մէկ խոշոր մասը կտակեր է հայ Ժողովուրդին և սակայն կտակը անդուբէն դրուած շրլլալուն, օրինական չի համարուեր և անդլ. կառավարութեան կողմէ կը դրաուուի հանդուցեալի անդլեհպատակ լինելուն պատճառով: Կենսադիրը պարզած է թէ ինչպէս ջանք կ'ըլլայ այդ կտակը փրկել:

Գիտականօրէն ոչինչ արտադրած է հանդուցեալը: Ան ալ զու՛ մըն է հայ Ժողովուրդի ազատարարական կուիւն: Գիտական ինչչեան շնորհալի տաղանդներ ամլացեր, կորեր են, որովհետև հայ դատը կուլ տուեր է զանոնք:

Բնական երևոյթ, սակայն ցաւալի փաստ մըն է: ԲԺ. Ե. Ս.

«ԲՈՒԺԱՆՔ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՊԵՐԼԻՆ. — Ո. Ս. — Երազխափութիւնը կը տկարացնէ այնքան որքան բնականոն յարարերութիւնը, եթէ որոշ սահման մը անցնի, որ կախում ունի իւրաքանչիւր անհատի կազմէն: Իսկ 45 տարեկան մէկու՛ մը մօտ յաճախակի կրկնուող երազխափութեան դարմանում մը ցոյց տալ անկարելի է առանց նախնական քննութեան:

ՄԱՐՍԻԼԻԱ. — Լ. Ա. — Պատահական դիշերուան աշխատանքի և Հետևարար անքնութեան վնասը անցողակի է և անկարևոր: Իսկ տևական դիշերային աշխատանքը կը վնասէ առողջութեան, մանաւանդ երբ աշխատաւորը ցերեկը հանդիսաքուն քնանալու սովորութիւնը ձեռք բերած չէ:

ՎԱՌԷՆ - ՕՊԻՆԻԷ. — Գ. ԵԱԳ. — 1) Դթի արբեւահոտութիւնը զանազան պատճառներէ յառջ կուդայ. եթէ շարունակուի, մասնազէտի դիմեցէք: 2) Շնչառութեան մարզանք ըրէք: